


Հատը 40 փարսա



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի
 լիսանգամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց չէական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՔԱՅՔՈՒՆ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւորութեամբ,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

ձեռք՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐԺԱՅԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|----------------|---|--|
| ԲԵՐԱ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (| 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (| 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ . |
| | (| 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՑԱՐ | | Չարչը Պօյուլ , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռնողեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւզողլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 42

ՇԱՐԱԹ

16 ՅՈՒՆԻՍ 1907

ՆՈՐԵԼՈՒԿ ԱԽՏ ՄԸ

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ

Անշուշտ տարօրինակ չափերի թուի ձեզ այս նոր յայտնութիւնը, քանի որ Ամերիկայէն չէ որ կուգայ, այլ՝ քիթերնու տակը, հոս, մեր լրագրական հրապարակէն:

Նախ պէտք է ըսել որ հիւանդութիւնը միմիայն ֆիզիքական չի կրնար ըլլալ, կան բարոյական հիւանդութիւններ, որոնք շատ աւելի վտանգաւոր պէտք է նկատուին քանի որ քոֆէսսիոններ, ճարտար բժիշկներ չունինք զանոնք դարմանող, ոչ ալ գիտութիւնը բան մը կը խօսի ատոր վրայօք, և սակայն ճշմարտութիւնը ան է որ, օր օրի այդ տարափոխիկ հիւանդութեան միջրոպները կը տարածուին, կ'ուճանան և կը պլշկեն առ հասարակ ամէն անոնք՝ որոնք գիրի, գրչի մարդ-

կ'անուանուին և իրենց բան գործ ըրած են գրականութեամբ ապրիլ:

Գրական ախտը, եթէ երբէք այս բառով կրնանք յորջորջել, նոր չէ մեր լրագրութեան մէջ: Թղթատեցէք հինէն, շատ հինէն մնացած թերթերը, անկերպարան հանդէսները և անոնց մէջ պիտի գտնէք ասղնտութներ, խածխըծութներ, անհատական վրիժառութիւններ, հայհոյանքներ, լուտանքներ, վերջապէս այն ամէն աղտոտ բանաձեւերը, որոնցմով մարդ իր դէմինին՝ բերնուց իսկ կը քաշուի կրկնելու:

Այսօր մեր լրագրութեան մէջ ալ ցաւալի է յիշել, դեռ կը շարունակուի այդ տգեղ սովորութիւնը, հիւանդութիւնը, որ տակաւ ունակութիւն դարցած է դժբաղդաբար:

Շատ ցանցառ թիւ մը կը կազմեն այն օրաթերթերը և պարբերականները, որոնք հաշտ աչօք նային իրարու և մէկգմէկու հանդէպ կրեն այն ազնիւ ընթացքը, զոր պարտ են տածել Շատ քիչ բացառութեամբ, ամէն թերթ իր դէմինը իր թշնամին կը կարծէ, և ամէն պարբերական հանդէս իր պաշտօնակիցը իր անկման միակ դակարթը կը դառնի:

Ասոնք իրենց գիտնալիք բաներն են, իրենց ներքին շահախնդրական մտածումները, որոնց վրայ ծանրանալ չենք ուզեր: Բա՛յց, եթէ կայ բան մը որուն համար կարծէ որ ցաւինք ու հրապարակենք, և այդ՝ իրարու հասցէի հրապարակաւ եղած անուանարկիչ և գձուձ հրատարակութիւններն են, որոնք՝ անոր ասոր ծաղու առարկան ըլլալէ ուրիշ օգուտ մը չունին:

Այս տխուր պարագան լաւ իմն կը հաստատէ սա բացարձակ ճշմարտութիւնը թէ, մենք վիճաբանիլ չենք գիտեր, թէ մենք լրագրութիւնը չենք ըմբռնած, թէ մենք իսկիւն ըսուած բանը չունինք, թէ վերջապէս մենք հրապարակագրութիւնը խառակեօզ հանիլաթի պէս բան մը ըմբռնած ենք եւն:

Ժողովուրդը այսօր զբօսնելու և խնդալու համար ունի կարգ մը թատերախումբեր, որոնք բէմի վրայ, այլ և այլ միմոսականութիւններով, իրարու հանդէպ տեսակ տեսակ խեղկատակ ասացումներով կ'զբաղեցնեն և ժամանակ անցնել կուտան անոր, իսկ լրագրութիւնը՝ թատերաբէմ չէ սիրելիներս, և խմբագիրներ պէտք է աւելի լուրջ ըլլան, ճանչնան իրենց կոչումը և ժողովուրդին շահը և ակնկալութիւնը չի զոհեն իրենց խայտառակ ու ցատկոտուկ բանավէճերուն:

Ամէն անգամ որ հասցէիս ուղղեալ ակնարկութեան մը և կամ չարակամ գրութեան մը հանդիպիմ, առա-

ջին մտածումս կըլլայ՝ ձուկի պէս համր և թոր նահապետին պէս համբերատար գտնուիլ, չարը բարիով յաղթած ըլլալու համար, սակայն, ինչպէս ըսինք վերը, որովհետեւ ընթերցող ժողովուրդը վարժուած է անգամ մը ախորժով կարդալ երկու կողմի պատասխանները, որոնք մէկ մէկ հայհոյութեան գլուխ գործոցներ կըլլան ընդհանրապէս, կստիպուիմ տեղի տալ սկզբունքիս և պատասխանել, անշուշտ տարբեր մարդու մը տարբեր զգացումներով և մտածումներով, և ահա ծանօթ թէ անծանօթ կսկսին խօսք նետել,

— Կարդացի՞ր . . . աղուոր մը շիներ էր վրագ գլոխդ . . .

— Նայինք ի՞նչ պատասխան պիտի տաս այս շարթու . . .

— Ինծի կուգայ որ բան մը չպիտի կրնաս գրել, հերիժը բէք գէշ զարկեր էր . . .

Այս և ասոնց նման խօսքերով կըսկսին հովհարել, ալ աւելի արծարծելու համար բարկութիւնը և ատելութիւնը:

Իսկ եթէ ասոնք լսելէ վերջ անտարբեր կենաս և կարեւորութիւն չի տաս գրուածքին,

— Ձեռ կրնար քի գրես . . .

— Գեղի է մնացեր անոր դէմ բան գրելը . . .

— Մարդը չախչախեր է քեզի, հէմ ալ կուզես նէ մի գրեր, տահա գէշը կըլլայ կը գրէ . . .

Հիմա կը տեսնէ՞ք թէ ուրե՛ր կը տանի այս նորեւուկ հիւանդութիւնը զմարդ:

Ըստ իս աւելի լաւ է մարդ պարզ արհեստաւոր մը ըլլայ՝ քան թէ լրագրող, այս անճոռնի գրական հրապարակին վրայ (միշտ բացառութիւնները յարգելով) ուր խռնուած են շատ մը ինքնակոչ խմբագիրներ, որոնք աւելի յարմարութիւն ունին լաթեղանակի ըլլալու քան թէ խաղաղաճի:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՎԱԳԼԽԱՐԿԵԱՆ ՊԱՅԲԱՐ

Եւրոպայի թատրոններուն ու հակասանայ
և անողոք զուգադիպութեամբ մը ... Իւս-
կիւտարի եկեղեցիներուն մէջ օրուան կարե-
ւոր խնդիրն է կանացի գլխարկը: Առաջնոյն
բարեբաւէն և վերջնոյն բեմէն անաթեմայ կը
կարգան անոր գործածութեան դէմ:

Երկուքն ալ — գլխարկ մի դնէք — կը
պոռան մարդկութեան գեղեցկագոյն կէտին:
Թատերասրահներէն արտայայտուած բողոքին
մէջ տրամաբանօրէն հասկնա ի պատճառ մը
կայ, բայց մեր կղերին յարուցած գանգատը
ես ինծի չեմ կրնար բացատրել և անոնց կա-
նացի գլխարկներուն դէմ ունեցած հակակ-
րութիւնը հետաքրքրական կը գտնեմ հանե-
լուկի մը չափ:

Իրիստոսի այդ աշակերտներուն քարոզած
պարզասիրութիւնը, ըստ իս, կիներու գըլ-
խուն մէջէն սկսելու էր և ոչ թէ վրայէն:

Թող չառարկեն թէ ինչ որ կիները գլուխ-
նուն վրայ կը դնեն՝ էրիկ մարդերը գլխի
հանելու կը ծառային:

* * *

Գլխարկի գործածութիւնը այսուհետեւ
կիներու համար ութերորդը պիտի ըլլայ մա-
հացու մեղքերուն ... իբրեւ թէ եօթը հա-
տը բաւական չըլլար:

Պարզասիրութիւնը միմիայն գլխարկով
չը վերջանար, և եթէ փոփոխում մը մտնել
հարկ է անպատճառ կանացի արդուգործին
մէջ՝ կը զարմանամ թէ ինչու այնքան վերէն
կսկսին փոխանակ հիմէն բարեփոխում մը մըտ-
ցընելու:

Գլխարկին չափ և գուցէ անկէ աւելի
պարզասիրութեան ոգւոյն հակառակ են Ղա-
լաթիոյ աշտարակին տրամագիծը ունեցող
թեւերը, փոխան շրջագոյնները, դէմքի ներ-
կերը, մազերու փոփոխելի գոյները, ախոր-
ժաբեր ֆօսֆօսները, բանուած սեւ գուլպա-
ները որոնց համար չեմ գիտեր ով գրած է
սա տողերը:

Եւ գուլպաները երկայն և սեւ սուղ
տեսակէ Ծիլ s'իգուս
Փողոցին մէջ փէշին տակէն, կարծես
կըսեն — եկէ՛ք հոս. —

Չէ, այս ամէնը կը մոռնան և գլխարկը
կառնեն կանցնին. մանաւանդ ... Իւսկիւ-
տարի գլխարկները, որոնք գլխարկէ զատ
ամէն բան կրնան ըլլալ, բայց ապահովապէս
գլխարկ չեն:

* * *

Իւսկիւտարի կանանց գլխարկները՝ Գուլէ-
Գարուսի կրպակներու քափոն ապրանքին
ալպօմն է:

Պանալիթէ մը չի գործածելու համար է
որ աւելորդ կը գտնեմ կրկնել թէ բացառու-
թիւնները յարգելի են միշտ: Իւսկիւտարի
պէս և ոչ տեղ մը ատանկ գլխարկներու այ-
լանդակութեան հանդիպած եմ:

Կամուրջին վրայ հազարներով կիներ շա-
րեցէք, որոնց մէջ միայն երկու հատ Իւսկիւ-
տարի կին գտնուին. եթէ վեց վայրկեանին
մէջ այդ երկուքին թեւէն չի բռնեմ չի զա-
տեմ մէկալներէն, մէյ մըն ալ թող մի տաք
որ Իւսկիւտար ոտք կոխեմ:

Եթէ Իւսկիւտարի Հայ կիները չըլլային
Գուլէ-Գարու հատ մը մօսիսի խանութ բաց
չէր կրնար մնալ:

Կապոյտ վարդեր՝ սեւ կամ կարմիր մա-
նուշակներու խառնուած, կը խամրին խեղ-
ճօրէն, դեղին, կանաչ ժապաւէններուն հո-
վանոյն ներքեւ, քիչ մը ատեն սեւ թաւիչէ
կտոր մը լիսկած որ բան մը չը ներկայացնէր,
միւս կողմը քիչ մը վերոք ակռած մը՝ ով
գիտէ ուր տեղէ բացուած և այս ամէնը՝
մոխրագոյն յարդէ ձեւակորոյս Ֆօրմայի մը
վրայ:

Տիեզերքի ամբողջ գոյները մէյ մը ծիւ-
ծանին մէջ՝ մէյ մըն ալ Իւսկիւտարի գըլ-
խարկներուն վրայ զիրար կը գտնեն խմբո-
վին:

Չեմ գիտեր ինչու այդ գլխարկներու վը-
րայ ճաշակի պակասութիւն մը աչքի կը զար-
նէ, չիք չեն կրնար ըլլալ. բարաքիճէ բան
մը կայ ամբողջութեանը մէջ. թարմ երբէք
չեն, օ՛հ:

Հակագլխարկեան քարոզները թերեւս նե-
րելի ըլլան Իւսկիւտարի մէջ տրուած ըլլա-
նուն համար, բայց չատ աննպատակ բան պի-
տի ըլլային այլուր:

* * *

Երէկ կին մը տեսայ որ հակառակ իր կամ-
քին՝ Իւսկիւտար հարս գացած է:

— Իրա՞ն է, Տիկին, կը հարցնեմ իրեն,
ալ գլխարկ չպիտի դնէք:

— Չէ, վի՛թ:

— Կատակ կընէք, չեմ հաւատար:

— Բայց ինչո՞ւ չէք հաւատար. կաղա-
չեմ, քանի որ Եւրոպիոյ կիները այս պիսիք-
լէթի դարավերջին մէջ իրենց վիճոն ունին՝
մենք ալ ուղեցինք ունենալ մեր վէլօն. ի-
րաւունք չունինք:

Յ. Ա.ՓԻՍԵ

ԵՐԿԻՈՐԵԱԿՆԵՐԸ

[ՊԱՏՄՈՒԱԾՔ]

Երեկոյթի մը մէջ, իրար տեսնելով հա-
նած էին մէկգմէկու:

Ամէն առաջին հանդիպման պէս, անոնցն ալ
շատ բուռն ըլլալ կ'երեւար: Տիրան իր հո-
րիին համակրած էր և փոխադարձաբար վե-
հանոյշ ալ միմիայն իր սիրելիին վրայ կը
մտածէր առտու իրիկուն:

Եւ իրօք ալ, ինչպէս չմտածէր Տիրանի
վրայ, երբ անոր պատուաւորութիւնը, կեն-
ցադավարութիւնը, ծանրագլխութիւնը ամէ-
նուն ալ յայտնի էր:

Եւ աւելի ի՞նչ յատկութիւն կրնաք սպա-
սել երիտասարդէ մը որ աղջիկ մը կը սիրէ:
Չէ՞մի որ մեծ մասամբ հիմակուան աղջիկնե-
րը և մանչերը հաւատարիմ չեն գտնուիր ի-
րենց սիրոյն, չեն յարգեր իրենց խոստումը,
հազար ու մէկ երգում կ'ընեն թէ անպատ-
ճառ իրար պիտի առնեն ու օր մըն ալ կը
լսես որ չեմ գիտեր ի՞նչ սին պատճառով մը
զիրար լքեր են:

Ամէն իրիկուն պիտի անցնէին, անպատ-
ճառ, թեւ թեւի Բերաի չխտակէն՝ մեղրա-
ծորան ժպիտը միշտ անպակաս իրենց շըր-
թունքներէն:

Ամէն մարդ, անհուն հրճուանքով կը դի-
տէր զանոնք և կ'ըսէր մտովին «Ահաւասիկ
երջանիկ զոյգ մը»:

Եւ ինչպէս երջանիկ չըլլային ասոնք երբ
ամէն իրիկուն թեւ թեւի կը պտըտէին իրար
հոտուքտալով, իրարու անկեղծ ցոյցեր
ընելով, զիրար վայելելով և մէկգմէկու հետ
խօսելով, որ Սինանեան-Մարլեան վէճին
շուրջ չէր դառնար:

Ինչպէս ըսի, կատարեալ խոստմնապահ
երիտասարդ մըն էր Տիրան, հաղիւ քսանը
մէկ գարուններու ծաղիկ: Իր այս քիչ մը,
ներկայիս մէջ, ամէն տեղ փնտռուող յատ-
կութիւններուն միացած էր գեղեցկութիւն
մը որ աղջիկ մը վար չէր մնար. ա-
ւելցուցէք նաեւ ասոր վրայ պատկառելի և
նախանձելի գիրք մը՝ որուն հասնելու հա-
մար շատեր ապարդիւն փորձեր ըրած են:

Միւս կողմէ վեհանոյշ ալ Տիրանէն նուազ
արժանիք մը չունէր. Իր երազոտ ու խօսուն
աչքերով, իր զգլխիչ աղւորութեամբը և
քնաւորութեամբ սոխակի մը չափ զուարթ
ըլլալով՝ ամէնուն հիացումին առարկայ եղած
էր թաղին մէջ: Ասկէ զատ գիտէր նաեւ
Հայերէնէն զատ ֆրանսերէն — բաւական
լաւ — և քիչ մըն ալ գերմաներէն լեզունե-
րը, ու ստացած էր դաստիարակութիւն մը՝
որ թերի չէր կրնար ըսուիլ, բառին ամէնէն
լայն առումովը:

Խօսած ժամանակը այն տեսակ անուշու-
թիւն մը, այնպիսի յանկուցիչ չէշտ մը կը
դնէր արտասանած բառերուն մէջ, որ պար-
զապէս կը հրապուրուէիր, կը գրաւուէիր ու
կ'ուզէիր զինքը մտիկ ընել մինչեւ իրիկուն:

Շատ յարմարած էին իրարու:

Առանց վեհանոյշի կեանքը կը դադրէր
գոյութիւն ունենալէ Տիրանի համար և փո-
խադարձաբար առանց Տիրանի բոլոր աշխարհ
մութ կ'երեւար վեհանոյշի գրաւիչ աչքե-
րուն:

Հետզհետէ կը նիհարնար Տիրան: Վեհա-
նոյշին հետ խօսած օրէն ի վեր չեա գիտեր-
ինչ մը եկած էր վրան որ զայն միշտ յոռե-
տես ըրած էր, բան մը կը զգար,
բայց չէր գիտեր ի՞նչ ըլլալը, տարտամ տըրտ-
մութիւն մը, մելամաղձոտութիւն մը պատած
էր իր ամբողջ մարմինը:

Բաւական ժամանակ այսպէս տեսեց ու
ամէն անգամ որ իրարու հանդիպէին, ժըպ-

տալից դէմքով մը կը բարեւէին զիրար, եղբայրական դուրգութեանքով իրարու ձեռք կը սեղմէին:

Օր մը, սակայն, երբ իրարու հանդիպեցան փողոցին մէջ, Տիրան բարեւեց զայն դարձեալ առջի դէմքովը, մինչ Վեհանոյշ չէր ընդունած բարեւը:

— Ի՞նչ, մտածեց Տիրան, արդեօք չտեսա՞նք, բայց ո՛չ, տեսաւ, տեսաւ, ու առանց կարեւորութիւն տալու անցաւ գնաց, պէտք է քովը մօտենամ եւ հասկնամ պատճառը:

— Ո՛ւր կը վազես ասանկ, սիրելիս:

— Կորսուէ՛, անամօ՛թ, ես քու սիրելիդ ինչէ՛ն կ'ըլլամ, հիմա ապտակ մը ուտեսնէ կը տեսնաս:

— Վնաս չունի, զարկ տէ՛ դուն զարկ, բայց ըսէ՛ թէ, ի՞նչ եղար մէկէն ի մէկ, երէկ իրիկուն տակաւին ուրախ գուարթ կը տեսնուէիր հետս, արդեօք գէշ բա՛ն մը ըսին, թշնամութիւն մը ըրին:

— Հայտէ՛, հայտէ՛, կորսուէ՛, ո՞վ ես դուն:

Տիրան չափազանց տխրեցաւ այս խօսքերը լսելով:

— Զարմանալի՛ բան, ըսաւ ինքնիրեն, ի՞նչ եղաւ արդեօք Վեհանոյշիս, ո՞վ բան մը ըսաւ, ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըրած եմ որ յանկարծ երես դարձուց ինէ, չէ՛, ասիկա՛ անպատճառ, պէտք է որ հասկնամ:

Կը զգար թէ սիրտը կը յօշոտուէր: Խեղճ աղուն գլխէն կրակ կ'ելլէր կարծես:

Ի՞նչ ընէր հիմա, Վեհանոյշ մը ունէր, եթէ ան ալ ձեռքէն երթար, որո՞ւ հետ պիտի տեսնուէր, որո՞ւ պիտի բանար իր սիրտը, գոնէ տունն ալ չէր գիտեր, ընտանիքին վերայ ալ տեղեկութիւն չունէր, որպէս զի գլուխը չորս դին զարնելով, մէջտեղ մարդ գնելով հասկնար այս անակնկալ լքումին պատճառը:

Այս դէպքը շատ մտատանջութիւն պատճառեց իրեն: Մէկ քանի օրուան մէջ ըսփէք մը կտրած էր: Ո՛ւր էր առաջուան առոյգ եւ կորովի Տիրանը եւ ո՞ւր հիմակուանը:

Տասը օրի չափ տունէն դուրս չեկաւ եւ մտածեց այս հանելուկը լուծելու համար:

Լացաւ իր դժբաղդ ու անմխիթար կացութեանը վրայ, անիծեց այն վայրկեանը՝ երբ հանդիպած էր Վեհանոյշի:

Հինգշաբթի իրիկուն մըն էր, երբ իր գործէն կը վերադառնար հանդիպեցաւ անոր, Բերա, Լիւքսէնպուրկի առջեւ, ու ինքն ալ իր կարգին այս անգամ երեսը անդիի կողմ դարձուց:

Այս շարժումը Վեհանոյշի աչքէն չվրիպեցաւ: Տիրանին քովը գնաց, բարեւեց զայն եւ ըսաւ.

— Տիրա՛ն, ի՞նչու, երեսդ անդիի կողմը դարձուցիր:

— Գիտնալով որ եթէ այսօր ալ բարեւ տամ, անցեալ օրուան պէս պիտի ընես:

— Ի՞նչ ըրի որ անցեալ օր:

— Ձե՛ս գիտեր, կ'ուրանա՛ս:

— Այո՛, բացարձակապէս տեղեակ չեմ:

Ու Տիրան, անցեալ օրուան պատահածը պատմելուն. տեսաւ որ Վեհանոյշ կ'ալլայլի եւ ապշութեամբ կը գիտէ զինքը ու չկրնալով զարմացումը զսպել՝

— Իրա՛ւ կ'ըսես Տիրան:

— Սուտ ըսելու ի՞նչ պարտականութիւն ունիմ:

— Աղէկ գիտե՛ս ես էի:

— Այո՛, կարծեմ թէ քեզի կը ճանչնամ, հէ՛մ ալ աղէկ կը ճանչնամ:

Վեհանոյշ, մտածեց ու մտածեց, յիշողութեանը կոչում ըրաւ, սակայն ատանկ բան մը չէր ըրած, քիչ մը եւս խորհելէ վերջ՝

— Հա՛, ըսաւ, քոյրս չըլլա՛յ:

— Ի՞նչ, ուրիշ քոյր ալ ունիս:

— Այո՛, մանաւանդ որ երկուորեակ ըլլալով մի եւնոյն տարիքը, մի եւնոյն հասակը եւ մի եւնոյն դիմագիծերը ունինք:

—

Բերա

ՍԵՊՈՒՅ Մ. ԱԿՈՒՆԻ





Կավուօշը . . . : Չէ՛ . . . ան հիմա փոխա-
նակ թերթերու յօդուած գրելու, իր յաւէտ
սիրեցեալ Տիւլսինէին պտուղ կը կրէ կոր:

Նինի՛ն . . . : Չէ՛ . . . ան վարպետ փխի-
մինի մը պէս Ծաղիկին թերթիկներուն վրայ
եղունդ սրելէ վերջ, Մանգումէի մէջ ճաքօ
ընել սկսաւ:

Ձաղա՛ն . . . : Չէ՛ . . . հակառակ մաքով
կապարի պէս ծանր, ու մարմնով, փետուրի
մը պէս թեթեւ ըլլալուն, թեթեւութենէ չա-
խորժիր:

Մառկոթը . . . : Չէ՛ . . . զինքը չի ջը-
րեղնուս համար փտտեցաւ, թոշնեցաւ խեղճը
ու անցած տարի քաշուեցաւ հրապարակէն,
ծոցուոր կնկան մը պէս, որ տղաբերքի ա-
միսներուն երբ ամէն բան յայտնի կըլլայ ար-
տաքուստ, տունէն դուրս չելլար ալ . . . :

Ուրիմն ո՛վ է և ո՛վ կրնայ ըլլալ սա ա-
նառակ որդին, պիտի ըսեն դերձակիս ու-
նեցած պարտքիս պէս հաստատ գիտեմ, ա-
մէն անոնք՝ որոնք լրագիրները, ոտքի վրայ
ցրուիչին մօտիկը, իսկ պարբերականներն ալ
մէյ մը Դուռ-գարուի Ռեսթը, մէյ մ'ալ խմբու-
գիր բարեկամներու ձեռքէն կը կարդան:

Սակայն խնդիրը ո՛վ ըլլալուս վրայ չէ,
այլ այն ըսելիքներուս վրայ, զորս դուրս
թափելու համար ձակուկութիւնը միմիայն ինծի
պէս անառակ որդի մը կրնայ ունենալ:

Ուրիմն:

Avanti majestro tempo di marehia!

Տղայ տարիքէս երբ կարեւոր պէտքի մը
համար մատու վեր չառնելուս համար վար-
ժապետս բարկութիւնը վարժուհիէս կառնէր
անոր թեւը և իր ալ ակռաները սեղմելով,
ահա այդ ճինճոց տարիքէս՝ նուագի այնքան
սերտ փափաք մը ունէի որ, չեմ կրնար պատ-
մել, բայց դուք հաւատացէ՛ք:

Այդ օրէն մինչեւ այսօր, թէեւ բաղդը
զիս մեխանայի կըյկըյնիմը, և կամ քարափի

ցիկան մը չէ ըրած, սակայն Բականիններու,
Մոցաութներու, Վէռաթներու ակռայ կճրտաց-
նելիք վիճակի մ'ալ չէ հասցուցած: Ուստի
ինչ որ պիտի գրեմ միւզիքի վրայօք, պէտք
չէ որ իր պատգամ առնէք և վաղն ալ
եղլաք հրապարակէք զանոնք, օրը օրին խօս-
ուած քարոզներու պէս:

Մինչեւ հիմա գիտէի որ միւզիք ըսուածը
ճաշակի խնդիր է և թէ ասկէ հիմնապէս
բան մը հասկցողը միայն դէմք մը (սուռաթ)
կրնայ ունենալ ատոր վրայօք կարծիք յայտ-
նելու:

Վայ ինձ, վայ ինձ, 140,000 միլիոն ան-
գամ վայ ինձ և վայ ձեզ, որ բաղնիքը ֆե-
սկյուելէն ալ banal բան մը դարձաւ այսօր-
այդ հոգեցունց ու բարձրաթուիչ գեղար-
ուեստը:

Հեռուն չերթանք, նա՛ օրուան նիւթը
Սինանեան-Մսրլեան duñe en si bémolը:

Թէեւ անձամբ ոչ մին և ոչ միւսը կը
ճանչնամ . . . մտերմաբար և սակայն երբ
կամուրջին վրայ կը տեսնեմ մէկը որ հովա-
նոցը թեւին տակ, ձեռքը պարծած նոթեր,
առանց առջին նայելու՝ միշտ խնդում երես
բարեւելով աջ ու ձախ Ղալաթիոյ կողմը
կանցնի՝ Յ. Սինանեանը ըլլալը կը կռահեմ:
Եւ երբ Սկիւտարի Մառքօին պարտէզը դիպ-
ուածաւ հանգիպիմ իր պօն ժուռին մէկ կո-
ձակը միայն կոճկած թուխ մարդու մը որ,
փոխանակ մարդու երես նայելու ծառերն
ի վեր կը նայի, տերեւներուն սոսափիւնէն
իսկ մէջօտի մը յղանալու համար, իսկոյն կը
վերաբերուիմ յիշել Մսրլեանը:

Արդ կը տեսնէք որ երկուքն ալ կը ճանչ-
նամ եղեր de vue:

Եւ որպէս զի իրենց վրայ գրած աստեղս,
երկուքին ալ արժանապատուութիւնը չի
խտխտացնեմ և նոյն իսկ պզտիկ ասղնտուք
մը տեղի չունենայ իմ և իրենց տաղանդին

ու կարողութեան միջեւ, ուստի բան գործ ընելով կը դիմեմ օրուան գէմքերուն, անոնց կարծիքը հարցնելու համար երկուքին միջեւ տիրող տարբերութեան մասին:

Նախ շունչս կ'առնեմ Իզմիր, գերահռչակ վարպետին Չուհաճեանին կարծիքը առնելու, գերեզմանին դա՛ տիպերէն, որ կը պատասխանէ ցրուած մազերը թոթուելով:

— Սինանեան Արթինիկը, Օլիմբիայի շատ աշխատած է, ուստի շատ բան կը պարտիմ իրեն, ամառս որ շուտ մեռայ և ի սրտէ մեռաւ մը անգամ չի կրցայ ըսել իրեն: Ու չադիր կը զարնէ նոթերը, մասնակրը անուշ են իր բնոյթին պէս: Իսկ գալով Մարրիեանին՝ կը ցաւիմ որ չպիտի կրնամ բան մը ըսել, քանի որ չեմ լսած, չեմ տեսած: Եթէ կուզէք զրկեցէք ինծի, անգամ մը քննեմ զինքը:

Քրտինքներս սրբելով շողենաւ կը նետուիմ և կը դառնամ մայրաքաղաքիս օրուան վարպետներուն հարցնելու համար:

Եւ տեսէք թէ ի՞նչ կըսեն անոնք:

Ռօմանօ կը պատասխանէ ամենայն անտարբերութեամբ:

— Per dirla la verità, non sono abbastanza forte per distinguere questi due maestri Missirlian e Sinanian, pardonne!

Յուսակաբութեանս վրայ մտած կոտ կ'երթամ գտնել Savastan, որ նոյն ատեն Ֆիֆու ձեռքը սխալ մը կընէր իր սենեկին մէջ. Je vous prie Maestro, կըսեմ իրեն կոնաձեւ դիրք մը տալով մարմնոյս, թի իտեայ է՛նէ՛թէ արանս սթօ Սինանեանի քէթօ Միսրուրեանի ...:

Մարդուկը պահ մը մասները մազերուն մէջ պտտցնելով խօսք կ'առնէ:

— Մայէսթոօ Սինանեան ինէ բէռիֆուիմօ, քէ պօռի նա քանի օռքէսթոսիօնի քէ առմօնի, թօ ալօ Միսիուեան ինէ քալօ բէտի, մա աքօմա թէլի բօլի բռաթիքա ...:

Եւ որովհետեւ պատրաստ թուղթ չունէի վրաս, ուստի ծխատուփիս կոնակը սղազրելով ըսածները, նոյն իսկ շնորհակալութիւն մ'ալ յայտնելու մոռնալով՝ կծիկը կը դնեմ, շունչս քէմէնէ՛նի Անատթուսին տոնելու, որ նոյն պահուն Չըրչըր երթալու կը պատրաս-

տուէր, և որ հարցումիս կը պատասխանէ սապէս:

— Տիւնեատա թագսիմ էրէյիճէ միւշքիւլ իսէ տէ, բռաթիք իլէ բէք քօլայ էօյրէնիլի, պէն նօթա պիլմէմ ամա տիխէյէնլէր տէրլէր քի նօթատան իճրա, բառմագտան պալ ագար ...:

Աս իմ գործիս չիգար ու չեմ կրնար գոհացում տալ հարցումներուս, կը մեկնիմ գաւաթ մը տիւղ հրամցնելով իրեն, ինչան չընորհակալութեան և կ'ուզուիմ շիտակ դուռնաճի Եագօմիին որ կը պատասխանէ:

— Թօթօ մուխքէֆ Սինանեան ֆէ քօթօ մօխքէֆ Միսիուրիեան լօննա աբարու խօսքէմ ֆէֆէ ֆլառիքթա, զուռնա փլուպէլէլ:

Կրկին՝ յուսակաբութիւն, գնչուի լեզուէն չի հասկնալուս համար կատարուիմ ուրիշ արուեստագէտի մը դիմել որ կարենայ զիս համոզել և կազմել տալ նոյն գաղափարը զոր մինչեւ այսօր մուծը մնացած է:

Իրաւ լաթէռնաճի Բօսթին կա՛յ ..., ուստի շիտակ Ղալաթիա Պիւլպիւլ փողոց կ'առնեմ շունչս, ու հոն կը գտնեմ հռչակաւոր լաթէռնաճին, որ ցած աթոռի մը վրայ ելած խանարեային կեր կուտար:

— Սաս բառաքալօ կ'ըսեմ մարդուկին, ձեռքերս շփելով, չօք բէճա իսէրիմ, սիզ քի օլտուգճա մուզիգատան աննարսընդ, սէօյլէին պանա, շու Մըսրուրեան-Սինանեան մէսէլէսինտէ, հա՛նկըսը հազլը տըր, բէճա իստէրիմ սէօյլէինիզ:

Մարդը պահ մը մտածելէն վերջ,

— Պիլ թանիրիզ Թըռքօնի, քլէֆթի նէ զաման քիլիլնուռօ մոնտօլինլի ցէվլուէճէք, ցօգ թաթլի եարածագ, գուլագ զէնկին, հօռա, սիռթօ, քասապ, հէռ պիռ սէյ վառ մա պիռ ատամ լաղիմ տիռ սիռապ, բօսթօլէնէ վոէ Եօռլիօ էքլինօ թօ քսէնօկաաֆիօն... նա պու եարածագ ցօգ զաման... բօզլա...:

Անէ՛ծք... բիւրիցս անիծեալ ըլլայ միւզիքն ալ, երաժշտական քննադատութիւնն ալ, յօդուածագրութիւնն ալ և այն ամէն բաները՝ որոնք ԳեղԱրժիՅՍՏ անունին բէշերէն կը կախուին մետաքս սաչախներու պէս:

Աւա՛ղ... մէկը չի կրցայ գտնելու որ կարենայ երկու մուզիֆանքներուն վրայօք հիմնաւոր և բանաւոր կարծիք մը տալ ...:

Ու երբ յոգնած և յուսահատ Բերա կել-
լայի, լիկած ոսկրապարկս տուն ձգելու հա-
մար, թիւնէլին մէջ երկու օրորդներ, որոնց
վարժուհի ըլլալը կառսօնէ գլխարկներէն
դուրս կուգար, սապէս կը խօսակցէին .

— Շիտակը կուզեսնէ դեռ չի կարգուած
Սինանեան Արթինը անխըտար կը սիրէի քի,
վրան թող խօնառութիւն չէի ընել, ամա հի-
մա կարգուելէն ետքը, չէ քի խօսքով ար-
ժանիքը, տահա քէօռ թէստէրէով միսերը
կտոր կտոր ալ ընեն, օխ ըլլայ պիտի պօ-
ռամ . . . :

— Էյ չիտակը կուզես նէ Մարըկանն ալ
քէմ չէքիճի աչքեր չունի ամա, ան տահա
խարէզ կապելիք է . . . պօյն ի վեր զաւակ
ունի . . . :

— Էյ ո՞րը վարպետ է կըսեն կոր . . . :

— Ձիյակմ ամա, երկուքն ալ եազին մէ-
ջը հաւկիթ մը չեն կրնար եփել . . . :

Et patati et patala !

ԴՐՈՊՈՒՍ.

ԻՆՉ ՊԷՏԲ Է ԳԻՏԼԱՅ

ԴԵՌԱՏԻ ՄԱՆՉ ՄԸ

.....

Մենիկ էֆ. Արզուման՝ որ ստանձնած է
հրատարակութիւնը ծանօթ գրագէտ-լեզուա-
բան Միքայէլ էֆ. Շամտանճեանի շարք մը
պիտանի թարգմանութիւնները, այս անգամ
եւս հրատարակած է « Ի՛նչ պէտք է գիտնայ
դեռա՞սի մանչ մը » խորագիր խիստ շահեկան
և բարոյալից հատորիկը, որ կը խօսի աղուն
նորածիլ տարիքին այլ և այլ գիտելիքներուն
վրայօք, գիտելիքներ՝ զորս ուսանելու սով-
բելու պէտք ունի, և կարծէ որ զբաղի ա-
նոնցմով, յօգուտ իր ապագայ հասուն հա-
սակին :

Այս հատորն ալ իր կարգին կուգայ լեց-
նել մեծ պակասը այն բարոյական խրատա-
կանին, ուրկէ զուրկ են մեր պղտիկները,
ծնողական ռամիկ ու սահմանափակ մտածում-
ներու երեսէն :

Դիմել՝ Քուրչունչու խան թիւ 7 :



ՊԱՊՈՒԿԻ ՖԼԻՐԹ

[ՖԱՆԹԷԶԻ]

Բազմոցին վրայ նըսած դէմ առ դէմ,
Ունսունոց ծերուկ, վաթսունոց պատաւ,
Երկուքն ալ ծիւրած . . . Ժպտուն զալկաղէմ,
Հին աւուրց սիրոյ . . . սըրտերնին զըրաւ :

Իրար ճալ կ'ուզեն, լըւիկ մերձ անխօս,
Աչքերն են Թարգման սիրոյ գաղտնիքին . . .
Այդ մունջ կասակն ալ շեշտ մ'է սիրահոս,
Ուր խունկ ու կընդրուկ կը ծըլսեն . . . հոգին :

Բիբերն են խորան ներա, մինչ միւսին
Անտակապիճներ խօլ ու սիրազեղ,
Պաշտամունք մ'ունին . . . պսրող պիտո՞ն, սին . . .
Սիրոյ վայելքին տենչէն քանի հեղ :

Գինովցած հոգին բուռն ու անզուսպ,
Հառաջներ պոռթկայ մամիկին բերնէն,
« Թէ է՞ր Եհովան իմ Կէսըս ընդ հուպ
Իրեց իմ զըրկէն, ու յոյսըս հիմէն »

Խախեց այդ մահը՝ ժանս ու վըշտամած,
Երբ Անոր հետ ես մէկ հոգի մէկ սիրս,
Ապրիլ կ'ուխտէինք . . . « Մեծ Այոն Աստուած,
Մէկեղ քամեցինք խընդի վիշտի թիրս . . . »

Հիմա միս մինակ, արդ կեանքի տաղտուկ . . .
Ո՛հ, առանձնացած խըցկիս մէջ նորէն
Արցունք կը Թափեմ անխընայ գաղտուկ,
Ու միշտ իւր յուշեր սիրսըս կը խորեն . . . » :

— Իրա՛ւ պատուական տիկին մ'ես այրի .
Սակայն իմ Կէսըս կոշ ու անճարակ,
Անարգանք . . . սեռին բընոյթովն վայրի,
Շատ չի փընտըւէր միշտ երկար բարակ . . . :

Իսէալ ամուսին չ'եղաւ ինձ համար,
Հիմա կ'անիծեմ այդ օրը մըքքէս,
Սարսուռ մը կըզգամ տենդով դողահար,
Երբ դէմըս կանգնած . . . Ովտանձ իբրեւ կէս . . . :

Իցիւ Թէ տիկին այդ Մե՛ծ Եհովան,
Իմ կինս ալ կանչէր իր քով մօտ օրէն,
Քեզի հետ մէկեղ մէկ սիրս ի մի բան
Երկրորդ « Մեծ Այոն » կըրկնէինք նորէն . . . :

Ու մեր փափաքներ իղծե՛ր խօրական,
Կեանքի . . . գարունին աւա՛ղ . . . խըռոված,
Նորէն ուշուներս մեր սէրն՝ յաւիտեան,
Սիրս սիրտի տուած օրհներս Մեծն Աստուած . . . —
Քէնկիւր ԱՐՇԱԿ Դ. ԻՍԳԷԶԻՐՅԱՆ

ԻԻՖԻԻՐ ԻԻՖԻԻՐ ՀԱՎԱՏԱՐ

ԲԵՂՆ ԱԼ ՏԱՍ ԶԵՄ ՀԱԻԱՏԱՐ

Ուսուցիչք ամէն բան երբ գոց տեղ մը պահուին՝ կ'որդնոտի, սակայն կիներու մասին խօսելով՝ անոնց մէջ ուսուցիչքն ալ չուսուցիչքն ալ համահաւասար կ'որդնոտին, և ահա ինչու ներկայ եղանակիս, երբ կը ներդրին առքերէն ու կը հանէն ինչ որ կը կրեն տակերէն՝ դուրս նետուիլ կ'ուզեն, առնէն դուրս, գիւղէն դուրս:

Մահալէ առասի բնակող ամէն ամուսին, ներկայ ամբարն, առ ի գովութիւն կընկանը միտին, պարտի պիւտճէին բարթիւ ծախք մը սին, և այսպէս իրենները դարձելով ուսին կը ստանի գիւղ մը ու հոն մնան, մ'նչու ցուրտերը կ'սկսէ ու մսին:

Տեսէք թէ գիւղագնացութիւն մուրացող խուռնազ տիկիները ինչպէս կ'ստիպեն իրենց ամուսինները, սրպէս զի չար նաչար գլուխ ծռէ խեղճը և գործադրէ անոնց սպառնական պահանջը որ, պէտք է ըսել թէ հրապարակի պոնտէ մը աւելի փափուկ ըլլալուն՝ օրին չի վճարելը անանկութեան կը տանի, որուն առժամայ սիմսիքը կըլլայ ապահովաբար Դատաստանական խորհուրդը:

Նախ այն կիները որոնք սկսած են որդնոտիլ ի ինչիր գիւղագնացութեան, կ'սկսին իրենց ամուսնոյն դէմ անդադրում քերուցալ խորտաննորուն պէս, թեւերնին, սրունքնին, կուրծքերնին բանալով խրոթ խրոթ եղունգներով կը քերթեն, զիչերները վրանուն վերմալը սոքերոյնին սենեկին մէջաեղը նետելով, եօժ կը պօռան, բիւծ կ'ընեն, որպէս զի անանդիստ ըլլան՝ օղիէն խրոթ քուն քաշող իրենց ամուսինները:

Մեղայ, տաքուն կեփիմ կոր, ըսելով կէս մերկ փողոցին դուռը կը կենան, սիւքեճիներու, հացագործներու և այլ Էսնաֆներու դէմ չորսդինին կը բանան, որպէս զի զիրենք նախանձող ամուսիններն չի կրնալով հանդուրժել այդ տգեղ արարքներուն, համակերպի և օր առաջ ճար ճարակ ընելով առն անա ելլայ քեղերը:

Եւ գեռ ինչեր ինչեր, զորս մի առ մի յիշելը աւելորդ կը սեպենք հոս:

Պատկեր մը միայն պիտի կրնայ գաղափար տալ ձեզ այդ կարգի տիկնոջութեան, զոր պիտի գծեմ հոս, և դուք, պիտի կըրնաք գահգահներ արձակել, զբօսնուլ, մինչ ես զիրենք ծաղրած ու լամբասած ըլլալուս համար պիտի ասղնոտիմ, պիտի անիծուիմ, պիտի հայհոյուիմ ամէն անոնցմէ՝ որոնք գըրջիս սոսկ խրվա պիտի ըլլան ծեծուելով:

* * *

Տիկին Ուսարիկ, քոյրը Կիւլիւկ և տալը՝ Իպրաքսէ, ինչպէս նաեւ Մարտիկ աղան չորս գենաւ նստելով՝ Սառընար տուն տես կ'երթային առտուն կանուխ առաջին շոգենաւով:

Աշխարհի վրայ շատ մը տարօրինակ բաներու խելք հասցուցած եմ, սակայն չորս նաւին մէջ կանանց կողմը խռուող ամէն ազգի կիներու վայրկենաբար բարեկամանալն և ժամերով քիթ քիթի խօսելնին չեմ կրցած հասկնալ, ինչ կընեն, ինչպէս կը ներկայացուին իրարու, ինչպէս չուտով կը բարեկամանան, ահա այս կէտը խաւարը, մուծը մնացած է ինձ համար:

Նրեք թէսթէ-պաշի տուտուները շոգենաւ մտնալուն կ'երթան կը շնթուկին անկիւն մը ու կ'սկսին քրտինքնին սրբել, մինչ Մարտիկ աղա արանց կողմը տեղ մը գտնելով սիկառը պլորելով տեղի ունենալիք բուրբակի ծախքերուն վրայ կը մտածէ առանձին:

— Բա ամա չօղ չէյ, աշխարհք եազլըի կերթան կոր նէ, բիւթիւնն ալ պանքան ձըգած բարաներուն ֆայիզովը չէ՞ եա ...

— Բա հապա ... խենդին հացը խելոքին փորը, դո՞ւն ինչու չընես չըլլա, աս օրուան օրս պըլըի Մառտիկի մը կընիկ պիտի ըլլա ...

— Աղէկ ալ ըրի ոտք հանեցի, իրեն մընար նէ քէօթրիւմի պէս տեղէն խըմըլտան:

մինչ ըլլալ չէր ուզէր կոր, ամա, ինչ ըրաւ նէ երէկ իրիկունն ըռախին զօռնն ըրած ճիւղէս ըրաւ ... ան սօն էլվիտա գիտե՛ս խօլ խապախիի պէս ճեպ ճերմակ պիլէկս չիլ-լիքին անցուցի տէ աշկին մէջն օր նայեցայ նէ, բալամառը քակեց, ի՛նչ եղաւ նէ անկէ սօղոսամտան եղաւ ...

— Էյ ապրիս քուրուկ, եանի դուն ալ չըլլաս նէ հալիկնիս եաման է, աղէկ օր սէ-պէպ եղար հավափոխին մէսէլէն տիրիցու-ցիր, եանի բէք պէտքութիւն ունէի, կըսէ Ուստիկին քոյրը, տամնոց սիմիթ մը կոծե-լով քառամալսլըխ ակումներուն տակ, մինչ Ուստիկ քովը նստող տիկնոջ մը դառնալով,

— Դո՛ւք ալ տուն տես կերթաք կոր մեզի պէս ...

— Թի իբաթէ՞ ... կըսէ քօքօնան, չա-խան դէմք մը շինելով:

— Հա՛ ... հոռոմ է եղէր, սանքի տէ-տիմ քի սիզտէ եազլըխճիութան իշին էվ կէօր կիտիօրսընըզ ...

— Քալէ եօ՛գ ... գօծամ իւց կիւն տիւր կէլմէյօր, պիր մանթօնէթա թուլթմուս սթօ մախալա, օրտա ծումպուս եաբիօր իմիս ... քայմէնի, տէօրթ թանէ ցօծուգ վար, էվ քիրա ... ու կսկսի լաւ ...

— Վույ բաթլամիշ ըլլան, զաթը նէրսի-թիս մախառա թիրէսի է տառցէր, աս ալ կայնէր իր տէրտը կուլայ կոր ...

— Քալէ սիզ պէլքի թանիրսինիզ, պիր էրմէնի գարիսի, նա սուրապիտա պիր բօս թօլէնէ քալէ Փօթիլիսի ... պիր նիսան վար ...

— Քա պիզ նէ՞ պիլէլիմ, թանըմայըզ քի ... իսմի նէ՞ իմիշ ...

— Քալէ բօս իրանէ թօնօմա թօ բու-թանա լու առքաքսէ օ տիքօղմաս ըսելով, հետի կնկանը կը հարցնէ:

— Էվլօիմէնօ քօռիդի, աքօ ըո՛ւ թա քը-սէվուօ ... քաքօ խոօնօ նահի նէ ... կըսէ ան ալ իր կարգին, ու երկուքը մէկ կսկսին լալ ու բամբասել այն կինը, որ իրենց սամու-սինը առած նստած է եղէր:

— Քա ճանըմ վազ եկուր տըռնք տէ սաղին դառցիր քէֆ ըրէ, սանկ նայէ մէյմը, գիտես քի պախճաներուն մէջի հավուզներուն վրայ թէքնէն դրեր չամաշիր կը լուան կոր,

աս վաքօռին չառիսին ճուրերը նայէ, քէօ-րիւր քէօրիւր ...

— Հա ամա, սիրտս զէմպէրէֆի պէս է, դաքելուն պէս վեր կը ցատկէ, իշտէ կէշ ե-ղայ, կընկանը էրիկը զապտ կն ըրէր տէյի խմացայ նէ ... կըսէ տիկին Ուստիկը:

— Քա ան պունելուն եօլը չիյտէն ան է, եռմուռճախս տանին կոզոտ շուները, քիմ-պիլիր ինչ պիլիմ ճամբայ պուներ էն քի, մարդն ալ ելէր հայու կընիկ սիրիր է ...

— Քեզի պան մը ըսեմ, կէնէ մեր էրիկ-ները պաշխա են, հի՛ ... ինչ ըլլայ ըլլայ երկինքին հրեշտակը ըլլայ նէ սանկ մը չին նայիր ...

Այսպէս խօսակցելով կը հասնին Սառեար, ուր քամառօթը կը պուսայ:

— Եէնի մահալէ, վար մը չըգաճա՞գ ...

— Քա վո՛ւյ եկէր ենք եղէր նայէ, մու-ցայ հարցունելու քի առդայի: հատիկը ինտոր կը շինեն տէյի ... անոնք հոռոմ են, աղէկը գիտես, կըսէ Ուստիկ մեկնելու պատրաստ-ուելով:

— Քա նասըլ հատիկ ... որի՞ համար է ... կը հարցնէ քոյրը,

— Քա ինչ գիտնամ, էլլանք հոս տուն մը ույտուրմիշենք, հառնինք, բազարլըսը յարմարի, բէնը տանք, կէօլ ընենք, եռէշ-միշ ըլլանք, բօրեազլըս օտա մը եաթախ օտասի շինեմ, նստիմ ելլամ, օր մըն ալ հա-վան Մառտիկ աղային եարամիշ ըլլայ տէ քէֆին գայ ես ալ ույմիշ ըլլամ, խաղայով չօծօխ մը ունենանք նէ հապա, առջի աղայ հանելուն հատիկը ո՛վ գիտէ մէջերնուս քի չինէ ...

— Ածուծու աշկին մեռնիմ քուրուկ քի, տահա վաքօռին մէջն իքէն ելէր ես հատիկը կը մտմտա կոր, կըսէ քոյրը յոնքերը պօյալը մազերուն մէջ բարձրացնելով, մինչ Մարտիկ աղան դուրսը սպասելէն ճանձրացած կա-նանց յատուկ վարագոյրին ետեւէն գլուխը կը ցուցնէ ըսելով,

— Աստեղին հաւնեցա՞ք նէ երթամ Շիր-քէթին բէհ տամ ... հէ՞ Ուստիկ ... չի-մաճիները վաքօռը վար կուտան կոր, տահա կայներ լեզու պիլէմիշ կընէք կոր ...

— Քա հա իշտէ տալմիշ եղանք Մառ-տիկ աղա, նա կուգանք կոր, գիտես ես,

Ի պարսպէն սու էօտէյի է քիչ մը, ջուրերն ի վեր նայելէն նայելէն գինովի պէս եղաւ...

— Ձէվզէկութիւնն ալ փարայով չառնինք, հայտէ նայիմ, ըսելով Մարտիկ աղան իրենները ժողուած դուրս կելլայ շողենաւէն, և չորսը մէկ սէրսէմ խաղերու պէս բաշա բաշա տուններն ի վեր նայելով գիւղ կը մըտնան:

Եւնի-մահալլէ գացողները գիտնալու են, բայց չի գացողներուն համար ըսենք թէ կարգ մը քառնթողներ, իրենց ամբան արհեստ ըրած են, նուամատոյցին գլուխը սպասել ամէն շողենաւին, որպէս զի տուն բըռնելու համար եկող ընտանիքները գիմաւորեն և անոնց օգտփոխութեան յարմար տուն մը սակարկելով մէկ քանի դրուշ շահին: Այս կարգի մարդիկ 50-60 տարու կըլլան, ընդհանրապէս սեւէն աւելի գէթինիի դարձած հինկէկ ուրտէնկօթով, և կաշիի սըլըրմաի վրայ շարուած 15-17 սեւ կուտու համբիւ մը սիկաւէն գիֆիր կտրած մասներնուն մէջ չիբըրտացնելով:

Ահա այս կարգի մէկը նշմարելով կամ կռահելով թէ Մարտիկ աղայէնք տուն տես եկած են, իսկոյն իրենց մօտենալով,

— Բարի լուս ձեզ ... կարծեմ որ քի, հրամանքնիդ տուն նայիլ էք եկեր, իմ ծառքիս տակը, բէք հաւատար, կէնիշ, սիւրի-սինէկին հոտը չըլլալու իսպալով, հօրը մէջը, թէմիդ տիւզ այսիս տուն մը կայ, ձեզի խըսմէթ ըլլայ պարէ ...

— Տեսա՞ր կիւլեանէ, փարա պոնողը պազի կըսեմ քի հիւռուէն կը ճաշցուի նէ դէմ կը կենաս, նայէ ինտո՞ր մարդը մեզ գէնկինի տեղ դրաւ տէ իփէկ պէօճէյի պէս ոլոր ոլոր կուգայ կոր գէմերնիս ...

— Էյ հա, ինչո՞ւ չընէ, որի՞ն տիպին է մնացիւր քի ելլայ տէ եաղլըն գայ, Աստուած պանը գործը աջողէ եալրում, իս չի կարգեց ամա, տիրոք եաղլըն չի խնայէր կոր, ապրի Մառտիկ աղաս, կըսեն երկու քոյր փսրտալէն, մինչ Մարտիկ աղա, խօսք կառնէ:

— Շնորհակալ եմ, անունդ ի՞նչ է քու կին ...

— Բօս պըլըն Մառտիկ կըսեն ինծի ...

— Օ՛ ... չըսես քի ատաշ ենք եղէր ...

— Օ՛ ... շատ աղէկ, անանկ է նէ ուշ-

ղուն բազարլըն մը պիտի ընենք, ևս ալ ձեզի աղթօր պէս գործ պիտի տեսնամ, հըրամնցէք ստեղը տուն մը կայ, անիկայ բէք մինասիւ է, ըլլայ նէ ան ըլլայ, խօշ տահա շատ կա՞յ ամա, տիկինները մէյ մը տեսնան նէ գիտեմ քի պաշխա տեղի չպիտի հաւնին:

Այսպէս միջնորդ աղան իր նէմտէն նազիք յաճախորդները առջին ձգած չիտակ կը տանի այն տունը՝ որ վարձու պիտի տրուէր:

— Չա՛թ, չա՛թ, բաց տիկին Սիւրիւկ, բա՛ց ... կըսէ միջնորդը:

— Քա մեղայ, տիկին Սիւրիւկը ի՞նչ է ... հիշ էօմբիւս մէջը աս անունն ալ չէի լսէր, կըսէ Ուստիկ քովինին:

— Հապս կայ, իմ տաքոջս ներոջը, քրոջը տալոջը աղջկանը անունն ալ Սիւրիւկցա էր:

Գիւղացի յատուկ պատմա ֆիստանին տակ ֆընտըն խուռտի պէս կուտու կըր կին մը, ալ ալ երեսներով և «կուտեմ քեզի» աշուկներով կը բանայ դուռը, մինչ ներսը մէկ երկու թաղէ ֆիտաններ նէկիթէ ըլլալուն համար ծակէ ծակ կը փախչին:

Երկարկ տուն մը փայտաշէն, կոկիկ, մաքուր և լուսաւէտ, վարը սեւ քարէ բակ մը, սանդուխ մը որ միջին յարկը կը տանի, քովը խոհանոցը և ... ամօթ չըլլայ ըսելս պէտքարանը ծըր ծըր, պալ թափէ լզէի պէս մաքուր, վերը չորս սենեակ Է՛մ դէմի, ճերմակ վարագոյրներով, սէտիւր, գետինը խսի՛ր՝ որ թարգմանի թախթապիթի, բիրէ եուվասի, վերջապէս տուն մը որ կրնար գոհացում տալ եաղլըն գալ և երկու երեք ամիս նստիլ ուզող ընտանիքի մը:

Մարտիկ աղա, իր առաջին քայլին, ղըրախտէն փախած հրեշտակ մը դէմը ելլալուն ուրախութեամբը լեցուած,

— Է՛, ինչ կըսէք Ուստիկ, ուշլուն է հէ՞ ...

— Քա ճանըմ, կախէ նայինք, քէօշէ պուճախ մէյմը աչքէ անցնենք, էրիկմարդ խըմին ի՞նչ կը հասկնայ, նայինք երեք, տօլապ, հիւճրէ, քիլէր նա՞սը ևն, կա՞յ, չիգա՞յ, մէյմը նայինք ...

— Է՛, դուք նայեցէք, ևս սըտեղը նէֆէս մը առնեմ, ըսելով, Մարտիկ աղա ելլալէն երեսները ջուրը կինջեցնէ, միշտ աչքին պոչովը չէ՝ ամբողջ աչք կտրած դուռ բացող

կէնճին կը նայի, որուն աչքերը դեռ «կուտեմ քեզի» կըսէին մարդուկին: Կին հիւրերը կսկսին վերով վարով աչքէ անցնել:

— Հրամանքինդ է աս տունը, անունդ ալ մոռցայ ... կըսէ Ուստիկ, ֆօթօկոաֆը քաշելու պէս աչքին մէջը նայելով,

— Այո՛, քուրերուս հետ մէկտեղ հիսսէտար ենք ...

— Քէնէ պաշխա քանի՞ քուր ունիս ...

— Չորս հատ, մէկ հատն ալ վերը քէօթրիւմ է, բանի ետարար չէ ...

— Էյ բէք աղէկ, մենք բռնելու ըլլանք նէ, դուք մէջը պիտի ըլլաք, չէնէ խաբուխաբամա մէղի պիտի քիրալամիչ ընէք ...

— Մենք ո՛ւր երթանք, օռթա խաթը իշէն վրայի խաթը քիրայի կուտանք ամէն տարի, մենք ալ տիպը կը պարտկուինք ...

— Հա՛ ... սանկ ըսէ, էյ քուրերդ կարգած են չէ նէ մի ազապ ...

— Մինակ ես կարգած էի, էրիկս, խառատէնիզ ծուկի երթալուն, ֆուռթունայի հանտըպեցաւ մեռաւ եւկու տարի առաջ, ես ալ որքեւարի եմ, մէկալները ազապ են ...

Մարտիկ աղա որ կը լսէր այս խօսքերը, նստած աթուռին վրայ ասեղ խօթուածի պէս տեղէն ցատկելով խօսքի մէջ կիյնայ ...

— Նայէ Ուստիկ քեզի ըսեմ, անանկ չարխա կապելու պէս խանութէ խանութ, տունէ տուն պիտի պարտինք նէ իմ դործս չէ, իշտէ հէրիֆներուն տունը տեղը բէք ույզուն է, ույտուրմիչ ըրէք, ես ալ լազարլըսը ընեմ լմընայ ...

— Հրամանքդ տեղդ ծանրը նստէ նայիմ Մարտիկ աղա, պազի կըլլայ քի՛ ... էրիկ ... մարդ ... ճան ... ույմիչ կըլլայ տէ՛ ... կընիկճէն ույմիչ չըլլա՛ր ... աչկիս մէջը կը նայիս կոր ...

— Տուք գիտէք, ետքը մեզի չըսաւ չըսէք, աղէկ մը տիխաթ ըրէք, ծակը ծուկը, ուճ պուճախը նայեցէք, փարան տուողը ես, հաւնողը դուք ...

— Բայց տիկին, խօսք կառնէ միջնորդը սիկառը քաշելով և կուահելով թէ Մարտիկին աչքը տունէն աւելի քազէ կինը խածած է, ասկէ պաշխա ույզուն տուն մը նայինք ըսէք նէ պօշունա պտըտած պիտի ըլլաք,

նայեցէք քի ույմիչ ըլլայ տէ բարով խերով նստիք վայելէք ...

— Քա ճանրմ, բէք վրայ կիյնաք կոր, ձգեցէք քի կընկանը հետ երկու չիֆթ լախըսը ընեմ, չօգ չէ՛յ ... կըսէ տիկին Ուստիկ կասկածներ արթնցնելով մաքին մէջ և միշտ տանտիրուհւոյն գեղեցկութիւնը իր ուսուռա խալիթի դէմքին հետ բախտատութեան դնելով, մինչ խեղճ կինը անդին անտեղեակ այս բաներէն, առաւելութիւններ կսկսի թափել, գոհ ձգելու համար յաճախորդները:

— Հիչ հող մընէք քուրուկս, հիմա դուք ըսենք քի տունը բռնեցիք, սանկ կերակուրով ցէօրէկը ջուրերը գացիք տէ, աղան ալ կանուխիէք եկաւ, ես չապուճախ անոր կէճէլիկը, թէռլիկները կուտամ, քրտնած է նէ կըռնըկին խալլուն կը դնեմ, ըռախին կը չալեմ առջին կը բերեմ, տիոր օր դուք ետ դառնաք նէ աւընտըրմիչ կընեմ քի սիրտը չի նեղանայ: Անցած տարի քիրածի մը ունէինք, անխըտար գոհ մնաց քի կընիկը ձըգած չըլլար նէ աս տարի ալ պիտի գար ...

...
Տիկին Ուստիկ այս բոլոր առաւելութիւնները լսելէ վերջ, երբ նախորդ տարուան յաճախորդներուն կընիկը ձգելն ալ իմացաւ, չեղլամ ատոր տառուսին դամ ըսելով միտքը դառցուց և սկսաւ չի հաւնիլ,

— Հա, ամա, դործիս չի պիտի գայ քուրուկ, մենք խալապալըիսը ենք, նայէ չորսս կը տեսնաս կոր, տահա թէյզէիս թախըմը կայ քի տալէթ պիտի ընեմ, թամամ վեց հողի են, կըլլայ քի աղքարս ալ կընիկը չօճօխները կառնէ կուզայ, տահա հալայինք կան, անոնց կարգած աղջիկները սրայով կելլան կուզան, էյ ատոնք ո՛ւր պիտի պառկեցունեմ ... չէ, չէ քուրուկ նեղուածք է ...

— Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր, կըսէ Մարտիկ աղան, սիկառը գետինը ձգելով, չըսե՛ս քի աթ ճամպազիէն խոշոր չատըռ մը խուռմիչ ընենք տէյի ... քեզի ո՛վ ըսաւ քի ես Սառեհար օթէլ կը բանամ կոր ... ճանճ մը պիլէ խապուլ չեմ ընէր, գիտցած եղիր ...

— Հախ ունի աղան, կըսէ տան տիրուհին, ձեռքը կուրծքին տանելով և վեր առնելով կիսաշխարհները, ետնի մեզի համար

հոգ չէ, ֆախաթ սիւրբիւ սէքէթ տալէթ ընելու ըլլա՞ք նէ պէտէրւոյիւր կըլլաք ...

Նոյն առան տիկին Ուստիկի քոյրը մօտեւ նալով ականջին,

— Ինծի նայէ քուրուկ, ֆառղին ես, ըռարութալը կէշ է կէնճը, կէշ ...

— Սուս եղիւր, զիտեմ կոր ամա, պէլի ալ ընել չեմ ուզեր կոր ...

— Կը տեսնա՞ս կոր մերինը ... աշկերը խաս լօխմաի պէս ուռեցան, ան ո՞ւր է սէրթլէշմիշ եղողը, կակողնացը կերաւ ...

— Ես անիկայ բուֆ պէօրէկի պէս կը սմքեցունեմ, կայնէ դաքս սըտեղէն դուրս նետեմ մէյմը ...

— Ոտքդ պազնեմ, իմ վրաս չիւքէ ընել մի տար ամա՞, գիտցած եղիւր, կէշին աշքեւրուն չեմ հաւնիր կոր, մէջը չառխի ֆէլէկ կը դառնայ կոր ...

— Դուռն ինծի ձգէ, ես անոր ետեւան կը շինեմ, ըսելով, միջնորդ մարդուն կը դառնայ,

— Էհ, աս տունը տեսա՞նք ես, պաշխա տեղեր ալ նայինք, էկէր ուշմիշ չըլլայ նէ կուգանք բէհը կը ձգենք չըլլար ...

— Կըլլայ, ինչո՞ւ չէ ամա՞, աս տունը ձեզի բէք ուղղուն էր, մէկալները քիւմէսի պէս բաներ են ...

— Ես ալ իշտէ քիւմէսի պէս բան մը կը բնառեմ կոր քի խոռոզս դապդ ընեմ, կըսէ Ուստիկ մարդուն ականջին, ինծի չի գար ետըրում, մարդս հաշարի է ...

— Հա՞ ... պանին մէջը պան կայ եւ ղէ՛ր ... ըսելով կը հեռանայ մօտերնուն, մինչ Մարտիկ աղա խօսք կառնէ,

— Էյ, նասըլ պիտի ընենք ... եղաւ եղաւ, չեղաւ նէ, վեցին վարօռին ետ պիտի դառնանք ...

— Մեղա՞յ ըսէ ... խօսխօճաման գեղին մէջը մինակ աս տունը կար դահէր, ի՞նչ կըլլաս կոր Մարտիկ աղա՞ ...

— Վրաս բարի, բան մը չեմ ըլլար կոր ամա, սա՛քի կըսեմ կոր քի, ժամկոցի պէս տուն տուն չեմ պտըտիր ...

— Ինծի նայէ, հո՞ս եկուր քիշ մը ... աս տունը կը բռնես ամա, ինծի ալ կը ձգես ...

— Ինչո՞ւ, քեզի՞ ի՞նչ եղաւ ...

— Աս տունը բռնողը էրիւր կը ձգէ կոր եղէր, չիմացա՞ր ինչ ըսաւ նէ ...

— Ան հալալին սէրթուլենէն ըլլալու է քի փչէր փչէր իրարմէ դատէր է, մենք բէնճիրէ չենք պանար ...

— Բէնճիրէ չէ քի, թէնճիրէն նստիս, խափախն ալ վրայէդ գոցես նէ չեմ նստիր, աշքիս մէջը կը նայի՞ս կոր ...

— Է՛յ, ինչպէ՞ս ըրիք ... յարմարեցա՞ւ, կը հարցնէ աղուոր աչուի տան տիրունին, միշտ Մարտիկ աղային դէմը կայնած ...

— Ձէ՛ աղջիկս չէ՛, տունիդ խերը տես, նայէ քեզի խօսք կուտամ կոր, Աստուած ողջութիւն տա՛յ նէ, քսան տարի ետքը՝ ես սէթեայով, կընիկս ալ խօթութիւն տէյնէյիով կուգանք կը պոնենք տունըդ ... ըսելով մինչ դուրս կելար դուռնէն, « կուտեմ քեզի » աչուկիւ տան տիրունին կուհեկով գործը, Մարտիկ աղային ետեւէն ականջն ի վար.

— Սօն վարօռով դա՞ս նէ ետթախդ բուֆլա հաղըր է ...

— Դատաստանական Խորհուրդին սօն ձուղապէն ետքը, էլմասըս ... (*)

ԼԻԼԱ

(*) Յաջորդ թիւով պիտի նկարագրենք թէ՛ ինչպէս Մարտիկ աղան համոզելով իր կինը կուգան բռնել տունը, իր էն տաք դուարձալիքներով:

ՄԵԾ. ՂԱԶԱՐՈՍ ԷՖԵՆՏԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ մերազգի ու օտարազգի ԺԱՄԱՅՈՒՅՄԱՎԱԾԱԹ Թէ ԺԱՄԱՅՈՒՅՄԱԳՈՐԾ արուեստակցաց մէջ հաղուազիւտ արուեստագէտներէն մէկն է:

Ինչպէս կը սիրենք ընտիր բժիշկ մ'ունենալ որ մեր հիւանդութիւնը կամ մեր հիւանդները շատ աղէկ բժշկէ, ունենալ լաւագոյն փաստաբան մը՝ որ մեր դատը վաստակի: Ինչ ծախքով նոյնպէս կը փափաքինք ունենալ ճարտարարուեստ ժամագործ ու ժամացուցավաճառ մը, որ մեր աւրուած ժամացոյցներն ամէն վարպետէ աղէկ շինէ ու ամէնէ աւելի ճաշակաւոր ու բանուկ ժամամացոյցները մեզ ամենուս վաճառէ:

Այս փափաքին համեմուտ համար դիմեցէք ուղղակի Մահմուտ փաշայ գափուսի, Սահաբըլար փողոց թիւ 28, ՂԱԶԱՐՈՍ ԷՖ. ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ժամացոյցի վաճառատունը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԴՐԻ-ԴԻԻՂ. — Մախուսէի վարչութեան վերջերս ի գլխավորութիւն ժողովրդեան հաստատած շոգենաւներու մէջ, կըսուի թէ շատեր նաւաշտակ (գայլապետ) և տերեւի մէջ փաթթած աղած ձուկ առնելով մարմարայի կապոյտը կ'երգեն կոր: (Գլխարկաւոր միւս սիւններուն ջերմապէս կը յանձնարարենք որ գլխարկին սիւնով մը կապեն, ձուկերուն մեզի չի յայթայթելու համար. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Անցեալ իրիկուն Վառիքի թատրոնին մէջ երբ սինկեմաթոկոսֆի համար կազմերը մարելով մութը ձգած են ժողովուրդը սրահին մէջ, միւսիւ մը տեղէն ելելով նախապէս աչքը խածած մէկ օրիորդին երեսը համբուրելու մտք երբ կը մօտենայ, սխալմամբ մօրուսաւոր հայրիկին երեսը կը համբուրէ, փոխարէն գաւազանի հարուած մը ուտելով գլխուն:

ՍԿԻՏԱՐ. — Պէյլերին պարտէզը օր օրի նոր փայլ մը կառնէ, շնորհիւ տեղացի տիկիններուն, որոնք հարսնիքի ճոխ քօսթիւմներով կուգան կը շարունակեն հոգ, որ մէկը իր ամուսնոյն, որմէկն ալ իր... (ինչուս պէտք, կարգացողը թող հասկընային սպասելով):

ՆՈՅՆ. — Իճատիէի թէփէն նոր բացուած Պոմօնի թախլիթ պարտէզը բերուած գարեջուրի քիւնոց ամանները գետնէն վերցնելով գեղեցիկ սեւին շրթունքներուն մօտեցնելու գլխուրթեան համար՝ չիք, աղուոր և բարեկիրթ երիտասարդներու պէտք կայ, գիմել թէփէյի կազինոն:

ՈՍԿԵՐՉԱՑ-ՇՈՒԿԱՑ. — Հոս տեղի ցերեկուան մօտի տեսարանը քիչ մը քիչ ծիծաղելի չէ, բոլոր խանութպանները զովանալու համար ձեռքերնին մէկմէկ խոյս բռնած ուտելով կ'ըրան կոր: (Նստուկ գործ տեսնող խանութպաններուն ստամոքսին շատ յարմար պտուղ չէ այդ, բայց ինչ և է. Ծ. Խ.):

ԻՆՉ ԿԸՍԷ ԹԵՐԹԻՍ ՏՆՕՐԷՆԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ գոհացում տալու համար իր բազմաթիւ ընթերցողներուն՝ այս անգամ ամէն զոհողութիւն յանձն առած կսկսի հրատարակել մինչեւ հիմա նմանը չի տեսնուած հետաքրքրաշարժ և արկածալից վէպ մը թարգմանուած օրուան հրապարակին է՛ն կարող գրագէտէ մը, որ անունը չուզէր հրատարակել: Կը յուսանք որ սոյն գեղեցիկ ձեռնարկը հաճոյքով պիտի ընդունուի ամէն անոնցմէ՝ որոնք կը սիրեն պարբերաբար կարգաւ եւրոպական նմանօրինակ գրուածքները:

* * *

Վերջին պահուն ստացանք Սալիշի, Ստեփան Երկանեանէ յօդուած մը, մեր սրամիտ երգիծաբան Յ. Ալփիարի ի պատասխան բայց յարգելով կենցաղագիտական օրէնքները իբր պաշտօնակից՝ չենք հրատարակեր:

* * *

Բարիկ. — Յ. Պուռսաւեան էֆ. — Ստացանք 12 ֆրանք:

Իզմիր. — Կ. Մալէճանեան էֆ. — Նոյն պէս ստացանք ի հաշիւ 3 Օսմ. Ոսկի:

Տրապիզոն. — Պօղոս էֆ. — Ստացանք 28 զրուշ:

Պադսաս. — Ստացանք Արեւելքի Պատմ. Տնօրինութենէն մէկ Օսմ. Ոսկի:

Արտուսէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՎԱԳՐԻ ՄԸ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ

ՈՐՍՈՐԴԱՎԷՊ

Ամէն օր քաղմաթիւ խմբակ մը սովորութիւն ունի հաւաքուելու Բարիզի Նէօլ-Սէն-Մարք փողոցի, անդլիական Էւառուսթիթէ ճաշարանին սեղաններու շուրջ:

Մնայուն յաճախորդներու մէջ կան շատ մը ֆրանսացի արուեստագէտներ, որոնք Բրիտանական խոհարարութեան յարած՝ պատիւ կ'ընեն ռօզպիֆին, զոր Մեծն Բրիտանիացիք ալ, փոխադարձ կերպով մը, կ'ոռոգեն ֆրանսական ընտիր գինիներով:

Հոն յաճախ խօսակցութիւնը կը դառնայ միջազգային այլեւայլ նիւթերու վրայ, գլուխները կը սաքնան, վիճարանութիւնները կը սաստկանան, լեզուները հետզհետէ սրուած, բառերը աւելի սուր ու արագ կարճակուլին իրարու, և մէկէ աւելի անգամներ այս վէճերը լուրջ պայքարներու փոխուած էին առիթ տալով այսպէս մենամարտի ու նոյն իսկ կռիւմարտի: Եւ որպէս զի մշտատեւ հանդարտութիւն մը պահպանուէր հոն, ներկայները իրենց մէջ որոշեցին չվիճիլ, ուստի համաձայնութեամբ որոշուեցաւ որ իրենց խօսուընտուըը այլ եւս բոլորովին տարբեր նիւթերու շուրջ դառնայ:

Աշնանավերջի մէջ՝ օր մը պատահեցաւ որ ճաշարանին խոշոր սեղանն ամբողջ գրաւուի որսորդութեան սիրահարներու խումբէ մը: Ծիւղ. այն ատեններն էր ուր Բարիզ քաղաքին ոստիկանապետը կը թոյլատրէ որսալ ճագար ու կաքաւ՝ հողի որոշուած սահմաններու մէջ միայն:

Որսորդները գնահատած էին անդլիայի պանդոկապետին ճարտարութիւնը, որով գիտէր պահանջուած չափովը եփել տալ նապաստակին երբուծը (տէօշ) և այս առթիւ շարունակ արուարձանի անտառներէն այս հերոսները պատուական զոհեր կը հայթայթէին անոր շամփուրին: Կուշտ ու կուռ ուտելէն վերջ այս պարոնները որոնց լեզուն իրենց սրուակներուն չափ դիւրաշարժ էր, սկսան առատ առատ պատմել իրենց արկածալից կեանքերէն զրուագներ: Ու դարմանալի և տարօրինակ էր դէպքերու այն տողաշարքը որ սկիզբ առաւ գինիէն գրգռուած իրենց երեւակայութեամբը:

Նախ սկսան տեղական երէի որսորդութեան պատմութիւնով, յետոյ ցատքեցին մինչեւ Պիրէնեան և Ալպեան որսորդութեան հանգոյցներուն: Սեղանէն առանց ելլելու, հալածելու ելան այծեամի ու խարբոնը, (izard), յամոյրի ազգէն այդ կենդանին՝ պախաւէժ անդունդներու մէջէն և իրենց հետապնդումնուն ատեն բռնեցին զանոնք: Պատմողներուն մէջ անշուշտ չափազանցողներ ալ կային. մէջերնուն մէկը ելաւ որ կեանքին մէջ այնքան արջ սպաննած էր որ կարող եղած էր անոնց մորթերովը նախանիւթ հայթայթել ամբողջ բանակի մը գտակներուն... Ուրիշ մը պատմեց թէ իր Լըֆօշեան հրացանովը ինչպէս ստիպած էր էգ որսաշուն մը (lice) իր չորս լակոտներով առջին պարելու, և Միւցադեան կալօր մը դառնալու:

Բոլոր որսորդներէն մէկը միայն չէր խօսեր, անունը Ռօպէռ էր. վաթսուեանամեայ ծերունի մը, սատանորդի նայուածքով մը, և դէմքի չիոյթ արտայայտութեամբ մը: Կըսուէր թէ շատ արկածախնդիր կեանք մը անցուցած էր, բայց շատ քիչ անգամ կը թղթատէր իր յիշատակներուն էջերը: Էհ, քեզի գանք հիմայ, պարոն Ռօպէռ, ձեր որսորդութեան կեանքին մէջ դուք ալ չէք ունեցած տարօրինակ դէպք մը, ըսաւ անդիէն ճաշակից մը, երբ օր մը խօսուընտուըը սովորականէն աւելի ոգեւորուած էր: Պահ... վրայ բերաւ ծերունին, անանկ երեւոյթով մը որ կարծես թէ հետաքրքրական բան մը չ'ունէր ըսելիք, յետոյ խոր թէ յիշողութիւնը դարձ կընէր իրեն, վեր բռնեց գլուխը, ականարկը փայլեցաւ յանկար-

ծական բոցով մը ... սոսկումի արտայայտութիւն, — որ պահ մը կարծել տուաւ թէ յանկարծական անհանգստութիւն մը ունեցած էր — ուրուագծուած էր գէմքին վրայ:

Բան մը չէ պարոններ, ըսաւ անոնց որոնք իրեն օգնութիւն մը ընծեակը կը փութային, բան մը չէ ... յիշատակ մըն է ... որ միտքս ինկաւ, երեսուն տարի առաջ պատահած: Յիշատակ մը՝ զոր գուք ալ ինծի պէս անմոռաց պիտի պահէք ձեր յիշողութեանը մէջ: Պատմելիք արկածներու մտածումն իսկ ցցուել կառթէ հիմակուընէ այն քանի մը թիւ մազերը զորս ունիմ գտնելիս վերել: Այն դերակատարներէն մին, որ պատմելիք գէպքիս մէջ մեծ դեր ունեցաւ ինծի պէս, անդլիպացի էր, այսպէս պարոններ, հոս գտնուողներէն իւրաքանչիւրը ի մասնաւորի պիտի սարսուռայ իր ազգակցին համար:

Կսկսիմ:

1814ի վերջերը, Պէնկալեան բանակին Մաք Քլէնչէմ քաբիթէնին հետ ծանօթութիւն ունեցայ: Հնդկաստանի վատառողջ մասերուն մէջ իր ունեցած երկայն բնակութիւնը, այս ընտիր սպային առողջութիւնը փճացուցած էր, որով թոյլտուութիւն ստացած էր մամանակ մը Քիէր բնակելու, որուն կլիման իրեն նպաստաւոր կը թուէր: Հոն էր որ սկստիք անոր հետ մեր առաջին կապակցութիւնը որ ապագային անձնուէր բարեկամութեան փոխուեցաւ: Երբոր քաբիթէնին արձակուրդը աւարտեցու և բանակ վերադարձաւ, խոստում մը առաւ ինէ որպէս զի իրեն ընկերանամ Կալկաթա, պալասնեռու քաղաք, ինչպէս կը կոչեն իր բընակիչները, և անկէջ ալ Բօլիակապաւ, ուր աղգակահներէս մէկը կըքաղէր լեղակի մշակութեամբ:

Պատմութիւնս աւելի առաջ մղելէ առաջ, պարոններ, ըսաւ Պ. Ռօպէր, պատշաճ է որ աւելի ճշգրիտ մանրամասնութիւններ տամ ձեզի իմ բարեկամիս՝ քաբիթէն Մաք-Քլէնչէմի մասին, որովհետեւ սովորական մէկը չէր, թէպէտեւ նկարագրելիք գէպքիս ժամանակ իր առջի վիճակին շուքը միայն մնացած էր: Ըմբռնի մը ֆիզիքական անկումի փոխանիչները ունէր, տեղացիի մը թուի մորթովը և իր թոյլ քաղուածքովը: Այն մարմինը որ այլ եւս չէր փայլէր այնպէս ինչպէս փայլած էր քանի մը տարիներ առաջ իր շնորհովը, և ուժի յատկութիւններովը, շատ լաւ կառուցուած շէնքերու կը նմանէր որոնցմէ ժամանակը կը խլէ ինչ ինչ դրուագներ ու զարդեր, և սակայն կը պարտաւորուի յարգելու կոյտը: Քաբիթէն Մաք-Քլէնչէմ, իր եղած վիճակին մէջ, տակաւին հազուադիւրս դիւրաշարժութեան և զօրութեան տէր մարդ մըն էր: Իր համբաւը տակաւին շատ մեծ էր թէ պատերազմի և թէ որսորդութեան մէջ: Թէպէտեւ իր համեստութիւնը արգելք կըլլար իր շահատակութիւնները պատմելուն, բայց քանի մը հատները ծանօթ էին, զորս չպիտի ուզէի որ փորձէին նոյն իսկ ամէնէն քաջերն ու յանդուգներն: Օրինակի համար, իր ամէնէն սովորական ժամանցներէն մէկն էր վայրի փիղերու հետքերուն հետեւիլ: Կը դրդուէր զանոնք, և երբ իրենց կատաղութեան գերագոյն աստիճանին հասնէին, կը մօտենար անոնց և ամենայն պաղարիւնութեամբ ժարեր կը փրցունէր անոնց պոչէն:

Այս գէպքը, պարոններ, չկրնար երբէք տարակոյսի տակ մանալ ամէն անոնցմէ որոնք առիթ ունեցած չեն ճանչնալու բարեկամիս մեթոտաւոր քաջութիւնը, և եթէ իր քաջութեան մէկ ուրիշ ապացոյցը կուգէք, փութամ ըսելու թէ, Պօկէւնկէր, կամ ասոր մօտիկ անուն մը ունեցող միջնաբերդին նշանաւոր պաշտպանութեան ատեն քաբիթէնը քսան և չորս ժամ անընդհատ կեցաւ թնդանօթի սալի մը վրայ և անդադրում հրամաններ տուաւ թնդանօթածիգներու ցուցամատովը ցուցունելով բոլոր այն տեղերը ուրտեղ կրակ ընել պէտք էր: Ու այդ միջոցին հազիւ թէ ձեւ մը ընդուն վրայ էր, զնտակ մը սուշելով կ'անցնի ու երկընցուցած մատը կը տանի, քաբիթէնը՝ առանց յուզուած երեւալու, և փափաքելով միանգամայն նշանաւորութեան կէտեր ցոյց տալ զինուորներուն, մեծ մատը վեր կ'առնէ և կրակին ուղղութեամբ կը կեցունէ ...: Դնդակը կուգայ և այս երկրորդ մասն ալ կը տանի: «Ես անոնց երբորդ մըն ալ կրնամ տալ ըսաւ քաբիթէնը խնդալով, և զայն ալ կը տանին, բայց այն ատեն պիտի նեղուիմ ծխախոտ առնելու համար...», և կիջնէ խնդալով:

[Շարունակելի]

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՈՅԹԶԵՆՈՒԹՅԱՅ


Արսնց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբաւ Հաւաւ, Թօփաչեաւն իսան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց քելլոններու
և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 ղըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—40



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճէլալ պէյ իսանին
սակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջիկասասանէ, Հնդկասասանէ, Ճալաէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գոյաւարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատօյին:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձև շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաև մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաև խասա, ամերիգան, պամա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաև կարի (ձօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—29



ՐԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Ձեռքէ վաճառում՝ քաղք փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խրանամալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխումներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՂԼԱՂԻ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: